ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1965 թ. մարտի 23—24-ը ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի հերթական՝ 21-րդ տարեկան ընդհանուր ժողովը։

Ժողովը ներածական ընդարձակ ճառով բացեց Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա բազմակողմանիորեն վերլուծեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտա-հետազոտական հիմնարկների գիտական գործունեությունը, նշեց նրանց զարգացման հետագա ուղիները։

— 1964 թվականը հանդիսացավ Սովետական Հայաստանի կյանքում վերելքի մի տարի ևս,— նշեց պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը,— սովետական եղբայրական հանրապետությունների ընտանիքում Սովետական Հայաստանը 1964 թ. ընթացքում հասավ խոշոր հաջողությունների ժողովրդական տնտեսության ու մշակույթի բոլոր բնագավառներում։ Ռեսպուբլիկայում հայտնաբերվեցին նոր բնական հարստություններ, առաջացան արտադրության նոր ճյուղեր, ընդարձակվեցին բարձրագույն դպրոցները, ավելի փոխվեց և առնականացավ մեր վերածնված հինավուրց երկիրը՝ Հայաստանը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, կառավարությունը, ամբողջ ժողովուրդը մեծ ուշադրություն են դարձնում ռեսպուբլիկայում գիտության զարգացման վրա, համարելով այն մեր առաջընթացի կարևոր նախապայմաններից մեկը։ Դրա վկայությունն այն է, որ կառուցվում են նոր գիտական հիմնարկներ, ձևոք է բերվում թանկարժեք գիտական սարքավորում, ստեղծվում են ժամանակակից բարդ գիտական տեղակայքներ, պատրաստվում են բազմաթիվ գիտական կադրեր։ Բավական է ասել, որ 1958 թ. հետո գիտական աշխատողների թիվը ռեսպուբլիկայում ավելի քան կրկնապատկվել է և այժմ անցել է 7.000-ից։

Այս բոլորի շնորհիվ Սովետական Հայաստանի գիտությունը նվաճել է նոր դիրքեր, գիտության բոլոր բնագավառներում ձևոք բերել նշանակալից տեղ։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի մշակած առաջադրությունները համապատասխանում են այն մեծ ու պատասխանատու խնդիրներին, որոնք դրված են ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի առջև, կապված սովետական գիտության և Հայաստանի ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի զարգացման հիմնական տենդենցների հետ։

Վ. Հ. Համբարձումյանը ընդգծեց, որ վերջին տարիների համար բնորոշ է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների ամբողջ կոմպլեքսի զարգացումը։

Մաթեմատիկայի բնագավառում զգալի հաջողություններ են ձևոք բերված ֆունկցիաների տեսության և օրթոգոնալ շարքերի հետազոտությունների ուղղությամբ։ Ընդարձակվել են աշխատանքները դիֆերենցիալ հավասարումների, մաթեմատիկական ֆիզիկայի և մաթեմատիկական տրամաբանության ուղղությամբ, ստեղծվել են բավականաչափ հիմքեր՝ զարգացնելու համար մաթեմատիկական ֆիզիկայի նոր ուղղություններից մեկը, որը կապված է այսպես կոչված ինվարիանտ ներդրման սկզբունքի հետ։ Մեխանիկայի և մաթեմատիկայի ինստիտուտում սկսել են ավելի լայնորեն ծավալվել աշխատանքները ապակեպլաստների մեխանիկայի և հարակից հարցերի ուղղությամբ։

Հաշվողական կենտրոնում լայն ուսումնասիրություններ են կատարվում մաթեմատիկական լեզվաբանության և մեխանիկական թարգմանությունների գծով։ Այս տարվա երկրորդ կիսամյակում պետք է պատրաստ լինի մասնագիտական թարգմանչական առաջին էլեկտրոնային մեքենան, որը պետք է հնարավորություն տա կատարելու որոշ տիպի տեքստերի թարգմանություն ռուսերենից հայերեն։

Երևանի աստղադիտարանում բոլորովին նոր աշխատանքներ են կատարվել գալակտիկաների կորիզների ուսումնասիրության վերաբերյալ։ Այստեղ կատարված են նաև գալակտիկաների հետաքրքիր լուսաչափական և գունաչափական հետազոտություններ։ Կառուցվում է նոր՝ 2,6 մետրանոց աստղադիտակը։

Ֆիզիկայի բնագավառում հետաքրքիր աշխատանքներ են կատարվում ֆիզիկա-մեխանիկական լաբորատորիայում՝ պոլիմերների ֆիզիկայի ուղղությամբ։ Այս տարվանից նույն ինստիտուտում զուգահեռաբար աշխատանքներ կծավալվեն կիսահաղորդչային էլեկտրոնիկայի գծով։

Պրեզիդենտի ներածական ճառում մեծ տեղ էր հատկացված երկրաբանական, կենսաբանական,

քիմիական գիտությունների բաժանմունքների աշխատանքներին։ Նա ընդգծեց, որ Հայաստանի հսկայական հումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը առաջին հերթին կապված է քիմիական գիտությունների զարգացման հետ։ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում շարունակվել են բիոլոգիապես ակտիվ նոր նյութերի սինթեզման աշխատանքները և մի շարք նոր պրեպարատներ անցնում են կլինիկական ստուգում։ Շատ հետաքրքիր տվյալներ են ստացվել Բիոքիմիայի ինստիտուտում՝ ուղեղի ազոտային փոխանակության մեջ գամմաամինոկարագաթթվի դերի մասին։ Ուսումնասիրված է նոր ակտիվ նյութերի ազդեցությունը արյան կորոնար շրջանառության վրա։ Օրգանական քիմիայի ինստիտուտում վերջնականապես ընդունված է, որպես գիտական աշխատանքի հիմնական ուղղություն, տարբեր օժանդակ նյութերի՝ ստարիլիզատորների և պլաստիֆիկատորների ստեղծումը։ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում կազմված են երկրաբանական նոր քարտեզներ, կատարված են հանքավայրում մետաղների ցրման առաջնային եզրապսակների օրինաչափությունների ուսումնասիրություններ, լուծված են մեթոդիկ մի շարք խնդիրներ։ Նավթագազաբերության գծով կազմված է ամփոփիչ լուրջ հաշվետվություն։ Բարելավվել է ինստիտուտի տեղական բազաների աշխատանքը՝ Բասարգեչարում, Ալավերդում, Քաջարանում։ Հետաքրքիր փորձեր են կատարված արհեստական երկրաշարժերի ժամանակ սեյսմոմետրիկ չափումների գծով Լենինականի գեոֆիզիկայի ինստիտուտում։

Կենսաբանական գիտությունների գծով պրեզիդենտը նշեց այն հաջողությունները, որոնք վերաբերում են բույսերի օնտոգենետիկ զարգացման (Ռուսաբանության ինստիտուտ), ներվային համակարգության (Ֆիզիոլոգիայի ինստիտուտ), գյուղատնտեսական կենդանիների հելմինթների դեմ պայքարի (Կենդանաբանության ինստիտուտ), բույսերի անհող աճեցման (Ագրոքիմիայի լաբորատորիա) և այլ բնագավառներում։ Միաժամանակ նշվեց կենդանաբանական գիտությունների մի շարք կարևոր ճյուղերի չափազանց հետ մնալը։ Հատկապես ընդգծվեց ակադ. Լիսենկոյի խմբի կողմից մշակված դոգմաների դեմ անհաշտ պայքարի անհրաժեշտությունը։ Միաժամանակ ցույց տրվեց, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայում արդեն կազմակերպված են բիոֆիզիկայի, բիոնիկայի և ռադիացիոն գենետիկայի լաբորատորիաներ։ Տարվում են աշխատանքներ գամմա-դաշտի և իզոտոպային լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հանգամանորեն կանգ առավ հայագիտության վիճակի և նրա զարգացման հեռանկարների վրա։ Հայագիտության բնագավառում տարվող աշխատանքները տրադիցիոն են մեր ակադեմիայի համար,— ասաց նա։ Հնագիտական պեղումներից ստացվող հսկայական նյութը, ինչպես նաև մեծ ձեռագրային ժառանգությունը կազմում են հարուստ հիմք հայ ժողովրդի անցյալի ուսումնասիրության համար։ Վերջին տարիներին ուժեղացել են նաև ուսումնասիրությունները Հայաստանի նորագույն շրջանի պատմության և հատկապես սոցիալիստական ժամանակաշրջանի պատմության ուղղությամբ։ Հրապարակի վրա կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի պատմությանը, սովետահայ գրականության պատմությանը, սովետական ժամանակաշրջանի արվեստի պատմությանը։ Շատ աշխատանքներ են նվիրված սոցիալիզմից կոմունիզմին անցման հետ կապված հարցերին։ Մեծ աշխատանք է տարվում հայ կլասիկների երկերի հրատարակության և հայ գրականության պատմության սիստեմատիզացիայի ուղղությամբ։

Բարձր գնահատելով հասարակական գիտությունների բնագավառում կատարվող աշխատանքները, Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ նրանք առաջիկայում էլ ավելի պետք է ընդարձակվեն և խորանան։ Նա ասաց, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի համար հաստատված 10 կոմպլեքս ուղղություններից երկուսը վերաբերում են հասարակական գիտություններին. դրանցից առաջինը հայագիտությունն է, իսկ երկրորդը՝ հասարակական գիտությունների բնագավառում քանակական մեթոդների լայն կիրառումը։

Պրեզիդենտի ներածական խոսքից հետո ժողովը անցավ ՀՍՍՌ ԳԱ 1964 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվության քննարկմանը։ Հաշվետվությունից պարզվում է, որ ակադեմիայի 5 բաժանմունքների մեջ մտնող 25 գիտա-հետազոտական հիմնարկների գործունեությունը ընթացել է 80 պրոբլեմի մեջ մտնող 363 թեմայի գծով։ Սրանցից 135-ը մշակվել են հասարակական գիտությունների բաժանմունքների 7 գիտա-հետազոտական հիմնարկներում։

Տնտեսագիտության ինստիտուտում աշխատանքներ են կատարվել ժողովրդական տնտեսության պլանավորման կատարելագործման, արտադրողական ուժերի տեղաբաշխման, կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի էֆեկտիվության, տնտհաշվարկի կատարելագործման և արտադրության մեջ նյութական շահագրգռվածության բարձրացման պրոբլեմների ուղղությամբ։

Պատմության ինստիտուտի հիմնական խնդիրն է եղել չորս հատորով «Հայ ժողովրդի պատմության» կոլեկտիվ կապիտալ ուսումնասիրության ստեղծումը։ Հայ ժողովրդի բազմադարյան պատմության այդ առաջին ակադեմիական, մարքսիստական ուսումնասիրությունը ստեղծելու գործում ներգրավված են ոչ միայն ակադեմիայի գիտական աշխատակիցները, այլև ոնսպուբլիկայի ԲՈՒՀ-երի դասախոս-մասնագետները։ Ինստիտուտում աշխատանք է տարվել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի պատմության, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության, կապիտալիստական հասարակարգի գենեզիսի և պատմության, ստրկատիրական հասարակության պատմության, ֆեոդալական հասարակարգի գենեզիսի և պատմության պրոբլեմների ուղղությամբ։

Մ. Արեգյանի անվան գրականության ինստիտուտում աշխատանքները ընթացել են հայ գրականության օրինաչափությունները արդի ժամանակաշրջանում, մարքս-լենինյան գրականագիտության, պոետիկայի և գեղարվեստական գրականության ոճաբանության, հայ նոր գրականության, հայ հին միջնադարյան գրականության, հայ գրականության կլասիկների հրատարակության և այլ պրոբլեմների գծով։

Լեզվի ինստիտուտի աշխատակիցների ջանքերը կենտրոնացված են եղել հայոց լեզվի զարգացման օրինաչափությունների վրա՝ կապված սոցիալիստական հայ ազգի զարգացման հետ, բառարանագրության և բառարանագիտության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառների ուսումնասիրության հետ կապված պրոբլեմների կատարման շուրջը։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում շարունակվել են աշխատանքները երեք հիմնական պրոբլեմների ուղղությամբ։ Դրանք են՝ Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունը, Հայաստանի ազգագրական ուսումնասիրությունը, հայ ժողովրդական բանահյուսության, պոեզիայի և երաժշտական ֆոլկլորի ուսումնասիրությունը։ Դրանցից առաջին պրոբլեմի կենտրոնական թեման է Հայաստանի հնագիտական ատլասի կազմումը։ Ինստիտուտի աշխատանքներում մեծ տեղ են գրավում արշավային-զաշտային աշխատանքները։ Հաշվետու տարում կատարվել են էնեոլիթի և բրոնզեդարյան հուշարձանների պեղումներ՝ Շենգավիթում և Լճաշենում, ուրարտական հուշարձանների պեղումներ՝ Կարմիր-բլուրում և Արինբերդում, Նոր Արմավիրի պեղումները, հին Հայաստանի (անտիկ շրջան) հուշարձանների պեղումները Գառնիում և Հին Արմավիրում, Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումները և վիմական արձանագրությունների հավաքումը։

Հասարակական գիտությունների բնագավառում այս հաջողությունների և նրանց առջև դրված խնդիրների մասին ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Արտաշես Կարինյանը, Արարատ Ղարիբյանը, Արտաշես Առաքելյանը, պրոֆ. Բարկեն Առաքելյանը։

Ակադեմիայի հետագա զարգացման հարցերին նվիրեցին իրենց ելույթները ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ի. Եղիազարովը, Հ. Բունյաթյանը, թղթակից-անդամներ Ա. Բարայանը, Վ. Բառայանը, Երևանի Պետական համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանը։

Տարեկան ժողովում լսվեցին նաև գիտական զեկուցումներ։ Ակադ. Արարատ Ղարիբյանը զեկուցում կարդաց ականավոր հայագետ Նիկողայոս Մառի մասին, թղթակից-անդամ Վահան Ղազարյանը՝ բարձրագույն բույսերի ծերացման մասին և ակադ. Սերգեյ Համբարձումյանը՝ անիզոտրոպ շերտավոր թաղանթների ժամանակակից հարցերի մասին։

Ակադեմիայի ընդհանուր ժողովը անցկացրեց ակադեմիայի իսկական անդամների և թղթակից-անդամների ընտրություններ։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին՝ Ստեփան Զորյանը և Կարապետ Մելիք-Օհանջանյանը (գրականություն), Նորայր Սիսակյանը (բիոքիմիա), Սերգեյ Համբարձումյանը (մեխանիկա)։ Թղթակից-անդամներ ընտրվեցին՝ Միխայել Ալեքսանդրյանը և Ալեքսանդր Թալալյանը (մաթեմատիկա), Գրիգոր Գուրզադյանը և Բենիամին Մարգարյանը (աստրոֆիզիկա), Գուրգեն Սահակյանը (տեսական ֆիզիկա), Բալեոն Ավագյանը (էլեկտրոնային կիսահաղորդիչներ), Հովհաննես Զալբիկյանը (քիմիա), Աշոտ Ասլանյանը (երկրաբանություն), Վահան Ղազարյանը (բույսերի ֆիզիոլոգիա), Գևորգ Ղարիբջանյանը (ՍՄԿՊ պատմություն), Արամ Ղանալանյանը (գրականագիտություն), Վազգեն Զալոյանը (փիլիսոփայություն)։

Ընդհանուր ժողովը ընտրեց նաև ակադեմիայի արտասահմանյան անդամներ՝ պրոֆ. Մանասե Սեակին (ԱՄՆ) և պրոֆ. Միրաուփի Տեր-Ներսեսյանին (Ֆրանսիա)։

Ընդհանուր ժողովի եզրափակիչ նիստում քննարկվեցին կազմակերպչական հարցեր։ Ժողովը ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ընտրեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին։ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և նախագահության անդամ ընտրվեց ակադեմիկոս Սուրեն Երեմյանը։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ